ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/96

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ
Համանման բողոք բերող՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Կ. Խաչունցի,
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,
«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Խաչատրյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 11.10.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) կողմից 15.10.2021թ.-ին

ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ համանման բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու համապատասխան որոշում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Ընկերություն 1-ը, ներկայացրած համանման բողոքով, Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով մրցույթի թիվ 22 չափաբաժինը:

2. Պարտավորեցնել պատվիրատուին համապատասխանեցնել մրցույթի թիվ 22 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին:

Բողոքներ քննող անձին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 11.10.2021թ.-ին:

11.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/96 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 15.10.2021թ.-ին:

18.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/96 համարի ծածկագիրը:

21.10.2021թ.-ին և 05.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 21.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.11.2021թ.-ին:

2. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Խաչպար» ՍՊԸ-ն 11.10.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1 որոշմամբ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 47 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի բժշկական պարագաներ (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1 ի աղյուսակներից հետո Պատվիրատուի կողմից պահանջվող բոլոր ապրանքների համար սահմանված են մի քանի լրացուցիչ պահանջներ, որոնցից թիվ 1-ում առկա է նաև

«1.1-ից 6-րդ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այ|ն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը (կից փաստաթուղթ թիվ 3):

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» մրցույթով պահանջվող ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու և ՀՀ տարածքում վաճառելու համար ՀՀ Օրենսդրությամբ սահմանված նման պահանջ գոյություն չունի, ինչը նշանակում է, որ Պատվիրատուի այդ պահանջը ոչ միայն չի համապատասխանում ՀՀ Օրենսդրությանը, այլն այդ պահանջը դառնում է խտրական, քանի որ սահմանափակում է Մալազիայի, Հնդկաստանի, Չինաստանի և այլերկրների արտադրողների նմանատիպ ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին, դրանով իսկ արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար իրականացնելու ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

Պատվիրատուի կողմից ՀՀ Օրենսդրությանը չհամապատասխանող այդ խտրական պահանջը նաև անհիմն կերպով բարդացնում է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Պատվիրատուի կողմից վերոգրյալ պահանջի ներառումը հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1 ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ ղեկավարվելուվ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու համապատասխան որոշում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի աղյուսակներից հետո (ձեռք բերվող բոլոր ապրանքների համար) Պատվիրատուի կողմից սահմանված «1. 1-ից 6-րդ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ արն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը՝

ա) խտրական է և արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար իրականացնելու գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու իր օրենսդրական սկզբունքը, դրանով իսկ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի սահմանումներին,

բ) անհիմն կերպով բարդացնում է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին,

գ) հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու համապատասխան որոշում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Ընկերությունը 19.10.2021թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն <<ԳԲՔԱ-ԼՕ-2021/96>> բողոքի և ի պատասխան ՀՀ Պ նախարարաի տեղակալ Կ. Բրուտյանի կողմից Ձեզ ներկայացված գրության մեջ՝ բողոքի մերժման թվով 7 առարկությունների և հիմնավորումների (որոնք այստեղ մեջբերված են չակերտների մեջ, հաստ շրիֆտով) հայտնում եմ, որ դրանցից և ո՝չ մեկը և ո՝չ մի առընչություն չունի բողոքի հետ հետևյալ հիմնավորումներով՝

1) <<…. ՀՀ տարածքում բժշկական արտադրատեսակների շրջանառությունը, պետական գրանցումը, ներմուծումը և կիրառումը սահմանված է «Բնակչության բժշկական օգնության եվ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով:>> :

<<Բնակչության բժշկական օգնության եվ սպասարկման մասին>> ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածում առկա սահմանումները դեռևս չեն վերաբերվում <<Խաչպար>> ՍՊԸ-ի բողոքին, քանի որ <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերով պահանջվող ապրանքների համար մինչև օրս ՀՀ Կառավարության կողմից հաստատված չէ այն լիազորված մարմինը, որն իրավասու է լինելու տրամադրել փորձագիտական եզրակացություն՝ բժշկական արտադրատեսակների Պետական գրանցման, գրանցումը մերժելու, կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու մասին:

2) <<…. ՀՀ ՊՆ կողմից նշված երկրներում ապրանքների գրանցված լինելու պահանջը չի ենթադրում որևէ երկրում արտադրված ապրանքատեսակների սահմանափակում, և ցանկացած Երկրի՝ ցանկացած արտադրող հնարավորություն ունի իր

կողմից արտադրված ապրանքատեսակը գրանցել Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ ճապոնիայում՝ եթե այդ ապրանքատեսակն իր որակական չափանիշներով համապատասխանում է գրանցող երկրի կողմից սահմանված նորմերին:....>> :

Հրավերով պահանջվող ապրանքները <<Խաչպար>> ՍՊԸ-ն ՀՀ տարածք է ներմուծում և նրանց վաճառքը ՀՀ տարածքում իրականացնում է ՀՀ-ում գործող իրավական ակտերով սահմանված նորմերին և պահանջներին համապատասխան, այլ ոչ թե Եվրամիությունում և/կամ ԵԱՏՄ-ում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում գործող իրավական ակտերով սահմանված նորմերին և պահանջներին համապատասխան, իսկ այդ ապրանքները ՀՀ ՊՆ-ն ձեռք է բերում ՀՀ Բանակի, այլ ոչ թե Եվրամիության և/կամ ԵԱՏՄ և/կամ ԱՄՆ-ի և/կամ Ճապոնիայի բանակների համար:

3) <<....Նաև, Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում (շուրջ 35 երկրներում) արդեն իսկ գրանցված են տարբեր այլ երկրներում արտադրված բժշկական նշանակության բազմաթիվ ապրանքատեսակներ և հետևաբար, ապահովում են տվյալ երկրների և երկրների միությունների ստանդարտներին (CE Mark կամ այլ) բավարարող որակական ցուցանիշները:....>> :

Հրավերով պահանջվող ապրանքները <<Խաչպար>> ՍՊԸ-ն ՀՀ տարածք է ներմուծում և նրանց վաճառքը ՀՀ տարածքում իրականացնում է ՀՀ-ին բավարարող որակական ցուցանիշներին և ստանդարտներին համապատասխան, այլ ոչ թե Եվրամիությունում և/կամ ԵԱՏՄ-ում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում գործող որակական ցուցանիշներին և ստանդարտներին համապատասխան:

4) <<.... Անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունը միանալով ԵԱՏՄ-ին ստորագրել է բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին» համաձայնագիրը:....>> :

Պատվիրատուն այս հիմնավորման ժամանակ երևի <<մոռացել>> է մեջբերել նմանատիպ <<ԳԲՔԱ-ԼՕ-2021/87>> բողոքի քննությանը իր կողմից ներկայացված մյուս պարբերությունը, համաձայն որի՝ <<Վերոհիշյալ փաստաթղթերի համաձայն Հայաստանի Հանրապետությունը ևս 2022թ հունվարի 1-ից պետք է անցնի բժշկական նշանակության ապրանքների պարտադիր գրանցման դաշտ:>> :

Դա նշանակում է, որ Պատվիրատուն շատ հստակ գիտի, որ այդ պահանջները ՀՀ-ում գործելու են 2022 թ. հունվարի 1-ից հետո, և որ նրանք չեն գործում 2021թ. հոկտեմբերի 6-ին հայտարարված <<ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով մրցույթի վրա, քանի որ ՀՀ-ն դեռևս չի անցել <<.... բժշկական նշանակության ապրանքների պարտադիր գրանցման դաշտ:>>, այսինքն՝ բողոքարկվող մրցույթի Հրավերով պահանջվող ապրանքների համար 2021թ. հոկտեմբերի 6-ի դրությամբ ՀՀ-ում գրանցման պահանջ պարունակող որևէ իրավական ակտ չկա, ինչպես նաև չկան այդ ապրանքների գրանցման համար սահմանված նորմեր:

5) <<.... հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները (..գնման առարկայի բնութագրերը՝ 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.) >> :

Պատվիրատուի այս հղումը ոչ մի առընչություն չունի <<Խաչպար>> ՍՊԸ-ի բողոքի հետ, քանի որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի բողոքը վերաբերվում է ոչ թե գնման առարկաների տեխնիկական բնութագրերին, որոնք առկա են Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի <<տեխնիկական բնութագրեր>> սյունակներում, այլ բողոքարկվում է Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի Ծանոթությունում առկա թիվ 1 պահանջը, որի մասով այս պահին ՀՀ-ում գործող և ո՛չ մի իրավական ակտերում և ո՛չ մի պահանջ չկա, այլապես Պատվիրատուն դրանք անպայման ներկայացրած կլիներ:

6) <<.... հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված 1-ով սահմանվել է «1. «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը, որը նպատակ ունի պատվիրատուին ապահովել որակյալ և անվտանգ ապրանքներով,....>> :

Պատվիրատուի այն նշումը, թե՝ նշված <<....պահանջը....նպատակ ունի պատվիրատուին ապահովել որակյալ և անվտանգ ապրանքներով,....>>, նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ նմանատիպ ապրանքների ձեռքբերման համար 2015-2021թթ. ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարվել են բազմաթիվ մրցույթներ, որոնցում <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող պահանջը առկա չէ (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-10):

Այդ մրցույթների հաղթողների հետ՝ այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի հետ, ՀՀ ՊՆ-ն կնքել է մատակարարման պայմանագրեր (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-5), որոնց հիման վրա ՀՀ ՊՆ-ին են մատակարարվել՝ այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, գրանցման հավաստագրերը չունեցող ապրանքներ, ինչը նշանակում է, որ եթե հիմք ընդունենք ՀՀ ՊՆ-ի գրության վերոգրյալ հիմնավորումը, ապա՝ կամ ՀՀ ՊՆ-ն վստահ է եղել, որ տարբեր մատակարարների կողմից, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, մատակարարվելիք՝ սակայն գրանցման հավաստագրերը չունեցող, ապրանքները կարող են <<... պատվիրատուին ապահովել որակյալ և անտանգ ապրանքներով, ...>>, կամ էլ որ ՀՀ ՊՆ-ն՝ որպես ՀՀ խոշորագույն Պատվիրատու, թույլ է տալիս, որ տարբեր մատակարարներ, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ն, իրեն ապահովեն գրանցման հավաստագրեր չունեցող՝ ոչ որակյալ և վտանգավոր ապրանքներով, սակայն այդ ապրանքների որակի հետ կապված և ո՛չ մի բողոք չի ներկայացրել և ո՛չ մի մատակարարի, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ին:

7) <<.... հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված 1-ով սահմանվել է

«1. «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը, ... չի կարող համարվել խտրական, հավասար պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար և չի հանգեցնում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը ....>>

Պատվիրատուի այս նշումը նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ նմանատիպ ապրանքների ձեռքբերման համար 2015-2021թթ. ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված բազմաթիվ մրցույթներին <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությունը հնարավոր է եղել միայն այն մրցույթներին, որտեղ բացակայել է <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող այս պահանջը, որի հիմնավորման համար Պատվիրատուի կողմից այդպես էլ չներկայացվեց ՀՀ-ում տվյալ պահին գործող և ո՛չ մի իրավական ակտ, ինչը նշանակում է, որ նման իրավական ակտ ՀՀ-ում տվյալ պահին պարզապես գոյություն չունի:

Պատվիրատուի կողմից <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> մրցույթով պահանջվող ապրանքների համար <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող այս պահանջի ներառումը ոչ միայն չի համապատասխանում ՀՀ գործող Օրենսդրությանը, այլև այդ պահանջը դառնում է խտրական, քանի որ սահմանափակում է տարբեր երկրների արտադրողների նմանատիպ ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ

մրցույթին, դրանով իսկ արգելք է հանդիսանում <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի, <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

Պատվիրատուի կողմից ՀՀ Օրենսդրությանը չհամապատասխանող այդ խտրական պահանջը նաև անհիմն կերպով բարդացնում է <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնման գործընթացին՝ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Պատվիրատուի կողմից վերոգրյալ պահանջի ներառումը հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը՝ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:

Հարգելի պարոն Լ. Օհանյան:

Ելնելով վերոգրյալներից, <<Խաչպար>> ՍՊԸ-ն վերահաստատում է իր բողոքը, ուստի՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Բժշկական պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:»:

3. <u>«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն 15.10.2021թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը բժշկական պարագաների գնման նպատակով 2021թ. հոկտեմբերի 6-ին հրապարակել է <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Հրավերի թիվ 22 չափաբաժնի (Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր 5 մմ-23սմ, ատրճանակատիպ) տեխնիկական բնութագիրը խտրական է, ուղղորդված և չի համապատասխանում <<Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին՝ <<22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:>>:

Հրավերի թիվ 22 չափաբաժնի (Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր 5 մմ-23սմ, ատրճանակատիպ) տեխնիկական բնութագիրը խտրական է և ուղղորդված:

Բնութագիրը կազմված է այնպես, որ դրան համապատասխանի միայն մեկ արտադրող՝ Johnson&Johnson ընկերության կազմի մեջ մտնող Ethicon Endo ընկերության հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիրը, մինչդեռ Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջների համաձայն 22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Մեր կողմից կատարվել է շուկայում առկա արտադրողների տեխնիկական բնութագրերի համեմատում պատվիրատուի կազմած թիվ 22 չափաբաժնի բնութագրի հետ, որի արդյունքում պարզվել է, որ պատվիրատուի հրապարակած մրցույթի թիվ 22 չափաբաժնի տեխնիկական բնութագրին համապատասխանում է միայն մեկ արտադրող:

Տեխնիկական բնութագրի ցուցանիշները նույնությամբ արտագրված են այդ ընկերության կայքի համապատասխան բաժնից, նույնիսկ փաթեթավորման տուփի համարն է գրված՝ <<N6 կամ համարժեք>>, այսինքն տուփում 6 հատ: Հարց է ծագում, թե որն է համարժեք 6-ին, այսինքն փաստացի պատվիրատուն չի կատարել շուկայի ուսումնասիրություն, չի համադրել տարբեր արտադրողների բնութագրեր, չի կազմել

այնպիսի բնութագիր, որին կհամապատասխանի նվազագույնը երկու արտադրող, այլ դրա փոխարեն ուղղակի արտագրել է Johnson&Johnson ընկերության կազմի մեջ մտնող Ethicon Endo ընկերության հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիրի բնութագրերը:

Այս ամենի հետևանքով բացառվում է մրցակցությունը, որն էլ իր հերթին բերել է ապրանքի գնի ուռճացման: Բերենք մեկ օրինակ:

Շուկայում առկա այլ արտադրողների նմանատիպ, նույն ֆունկցիաները կատարող և պատվիրատուի մոտ տեղադրված Գեն 11 գեներատորների հետ համատեղելի հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիրների շուկայական արժեքը գտնվում է 220.000 ՀՀ դրամից 260.000 ՀՀ դրամ սահմաններում, մինչդեռ պատվիրատուն նշված ապրանքի մեկ միավորի համար որպես նախահաշվային գին սահմանել է 371.233.60 ՀՀ դրամ, այսինքն շուրջ 65 տոկոս թանկ այն պարագայում, երբ որակական որևէ նշանակալի տարբերություն չկա, ուստի նաև հարց է ծագում պետական միջոցների արդյունավետ ծախսման և գնումների ու գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման մասով:

Եթե պատվիրատուն պնդի, որ գնային այդ ահռելի տարբերությունը պայմանավորված է որակով, ապա հարց է ծագելու, թե այդ ինչ առանձնահատկություններ կամ տարբերություններ կամ առավելություններ ունեն պաշտպանության նախարարությունում կատարվող էնդոսկոպիկ և բաց միջամտությունները, ՀՀ-ում առկա այլ բժշկական կենտրոններում կատարվող էնդոսկոպիկ և բաց միջամտությունների հետ համեմատած, այսինքն որն է պատճառը, որ ՀՀ ՊՆ-ում նախընտրում են 65 տոկոս շուկայականից թանկ արժեքով ձեռք բերել ապրանք, սակայն ՀՀ մյուս բժշկական կենտրոններում, որտեղ նույնպես տեղադրված են պաշտպանության նախարարությունում շահագործվող նույն Գեն 11 գեներատորները, կատարում են նույն վիրահատությունները, սակայն օգտագործում են շատ ավելի մատչելի այլ արտադրողների հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր: Փաստացի եթե մի քանի բժշկական կենտրոնում նույն ընկերության գեներատորն է տեղադրված, ապա հարց է ծագում այսպիսի խտրական մոտեցման հիմնավորումների մասին:

Եթե նույնիսկ պաշտպանության նախարարությունում կատարվող միջամտությունները ունիկալ են, նախատեսված հատուկ բարդ դեպքերի համար, որոնք այլ բժշկական կենտրոններում չեն կատարվում կամ ըստ պաշտպանության նախարարության Johnson&Johnson ընկերության կազմի մեջ մտնող Ethicon Endo ընկերության հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիրն ունի այնպիսի բացառիկ առավելություններ, այնպիսի նշանակալի որակական տարբերություն, որի համար նպատակահարմար է վճարել շուրջ 65

փոկոս թանկ, ապա հարց է ծագում թե ինչու է մրցույթ հայտարարվում, ով ում հետ է մրցելու:

Փաստացի այս մրցույթը թիվ 22 չափաբաժնի մասով կրում է ձևական բնույթ և մրցակցություն չի լինելու:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով մրցույթի թիվ 22 չափաբաժինը:

2. Պարտավորեցնել պատվիրատուին համապատասխանեցնել մրցույթի թիվ 22 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին:

Ընկերություն 1-ը, 25.10.2021թ.-ին ներկայացված գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«Ձեր աշխատակազմից 2021թ. հոկտեմբերի 22-ին ստացել ենք ՀՀ ՊՆ դիրքորոշումը, որի համաձայն իրենց հրապարակած մրցույթի հրավերի 22-րդ չափաբաժնի արտադրանքի տեխնիկական բնութագրին համապատասխանում է նաև. Reach Surgical ընկերության արտադրանքը:

Մեր ընկերության կողմից նամակ է ուղարկվել ՊՆ դիրքորոշման մեջ նշված Reach Surgical ընկերությանը:

25.10.2021թ. դրությամբ որևէ պատասխան չենք ստացել նշված արտադրողից:

Ելնելով վերոգրյալից, չենք կարող ոչ հերքել, ոչ հաստատել Reach Surgical ընկերության արտադրանքի համապատասխանությունը ՀՀ ՊՆ հրապարակած մրցույթի 22-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրին:»:

4. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 11.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/16605-2021 և 18.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/16985-2021 գրություններով դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի և «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 11.10.2021թ.-ին և

15.10.2021թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 14.10.2021թ.-ի թիվ ՊՆ//5540-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««Խաչպար» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ (ծածկագիր՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/96, 11.10.2021թ.) հայտնում եմ հետևյալը.

«Խաչպար» ՍՊ ընկերությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացրել էր բողոք՝ նշելով, որ գնման ընթացակարգի հրավերով հաստատված «Տեխնիկական բնութագիր» Հավելված 1-ի աղյուսակից հետո սահմանված լրացուցիչ պայմանների 1-ին ենթակետով գնման ենթակա բոլոր չափաբաժինների համար սահմանվել է «1. 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը: Բողոքի այս մասում «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից թույլ է տրվել վրիպակ, քանի որ Հրավերի բոլոր՝ 47 չափաբաժինների համար սահմանվել է. «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները»: Նշված պահանջը ըստ ընկերության տնօրենի՝ սահմանափակում է տարբեր երկրների արտադրողների նմանատիպ ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքն իրականացնող Խաչպար» ՍՊԸ մասնակցությունը տվյալ մրցույթին:

Ընկերության տնօրենի կողմից բողոքի տվյալ դրույթը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ ՊՆ կողմից նշված երկրներում ապրանքների գրանցված լինելու պահանջը չի ենթադրում որևէ երկրում արտադրված ապրանքատեսակների սահմանափակում, և ցանկացած երկրի՝ ցանկացած արտադրող հնարավորություն ունի իր կողմից արտադրված ապրանքատեսակը գրանցել Եվրամիության Ա/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ ճապոնիայում՝ եթե այդ ապրանքատեսակն իր

որակական չափանիշներով համապատասխանում է գրանցող երկրի կողմից սահմանված նորմերին:

Միաժամանակ, ՀՀ տարածքում բժշկական արտադրատեսակների շրջանառությունը, պետական գրանցումը, ներմուծումը և կիրառումը սահմանված է «Բնակչության բժշկական օգնության եվ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով: Նաև, Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ¬ում և/ կամ ճապոնիայում (շուրջ 35 երկրներում) արդեն իսկ գրանցված են տարբեր այլ երկրներում արտադրված բժշկական նշանակության բազմաթիվ ապրանքատեսակներ և հետևաբար, ապահովում են տվյալ երկրների և երկրների միությունների ստանդարտներին (CE Mark կամ այլ) բավարարող որակական ցուցանիշները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունը միանալով ԵԱՏՄ-ին ստորագրել է բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին» համաձայնագիրը:

Հիմք ընդունելով վերոհիշյալը, և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները (..գնման առարկայի բնութագրերը՝ 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.) հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված 1-ով սահմանվել է «1. «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջը,որը նպատակ ունի պատվիրատուին ապահովել որակյալ և անվտանգ ապրանքներով, չի կարող համարվել խտրական, հավասար պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար և չի հանգեցնում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը քանի որ, ինչպես արդեն նշվել է՝ թվարկված երկրներում իրենց ապրանքները կարող է գրանցել ցանկացած երկրի արտադրող, եթե այն անցնում են որակի և անվտանգության փորձաքննություն և համապատասխանում է տվյալ երկրի ստանդարտներին բավարարող որակական ցուցանիշներին:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Հրավերի վերոհիշյալ պահանջը չի հանգեցնում «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից նշված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի խախտմանը (.. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը...), ուստի գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊ ընկերության՝ բողոքով ներկայացված պահանջը անհիմն է, իսկ բողոքը ենթակա է մերժման:»:

Պատվիրատուն, 21.10.2021թ.-ի թիվ ՊՆ//5637-2021 գրությամբ ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքը (ծածկագիր՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/96, 15.10.2021թ.), հայտնում եմ հետևյալը.

«Մեդէքսպերտ» ՍՊ ընկերությունը ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացրել էր բողոք՝ նշելով, որ գնման ընթացակարգի հրավերի 22-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը խտրական է և ուղղորդված: Ընկերության կողմից նշված դրույթը չի համապատասխանում իրականությանը, քանի որ միջազգային շուկայում առկա են բազմաթիվ ընկերություններ, որոնք նույնպես արտադրում են 22-րդ չափաբաժնով պահանջված տեխնիկական բնութագրին համապատասխան արտադրանք (օրինակ՝ Reach Surgical (Tiajin) Co., Ltd ընկերությունը): Ինչ վերաբերում է 22-րդ չափաբաժնի ապրանքի պեխնիկական բնութագրի կազմմանը, ապա այն կազմվել է հիմք ընդունելով կլինիկայում առկա և տարիների ընթացքում շահագործվող պարագաների տեխնիկական բնութագիրը, իսկ փաթեթավորմանը վերաբերող «Ns6 կամ համարժեք» արտահայտությունը դեռ չի նշանակում, որ հնարավոր մատակարարը պետք է տրամադրի ապրանքը միայն N96 փաթեթավորմանը, և հետևաբար փաթեթավորումը կարող է լինել այլ: Նման հարցերը մասնակիցները կարող էին ճշտել հայտարարված մրցույթի ընթացքում պարզաբանման միջոցով, սակայն գնահատող հանձնաժողովն այդպիսի հարցումներ չի ստացել:

Հաջորդ հարցը, որին անդրադարձ է կատարել «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերությունը, դա Պատվիրատուի կողմից սահմանված նախահաշվային գինն է: Ապրանքի նախահաշվային գինը պատասխանատու ստորաբաժանման կողմից սահմանված է եղել՝ որպես կողմնորոշիչ ընդունելով նախորդ տարվա պայմանագրով ամրագրված միավորի գինը: Եվ եթե հնարավոր մասնակիցը մրցույթի ընթացքում մեկ միավորի համար առաջարկեր՝ մասնակցի կողմից նշված շուկայական 220.000-ից 260.000 ՀՀ դրամ գինը, ապա տվյալ չափաբաժնի ապրանքատեսակը կարող էր գնվել առաջարկվող նվազագույն գնով՝ տնտեսելով նախահաշվային և առաջարկվող գումարների տարբերությունը: Իսկ

պետության կողմից կատարված ծախսերը ձևավորվում են մրցույթի արդյունքում կնքված պայմանագրային գների հիման վրա և ոչ թե նախահաշվով սահմանված գնով:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության բողոքով ներկայացված պահանջը անհիմն է, իսկ բողոքը ենթակա է մերժման:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 06.10.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) բացի այլ պայմաններից սահմանվել է, որ ապրանքները պետք է ունենան Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ.-ին ներկայացված բողոքը և «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 15.10.2021թ.-ին ներկայացված համանման բողոքն անհիմն են ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը:

Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 06.10.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքները պետք է ունենան Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն

որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով

սահմանված պայմանը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ և 22-րդ կետերի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա այն պայմանը, որ ապրանքները պետք է ունենան Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները), չի խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ուսումնասիրելով «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի համանման բողոքն ու 25.10.2021թ.-ի գրությունը, դրանցում առկա իրավական ու փաստական հանգամանքները, համադրելով Պատվիրատուի 21.10.2021թ.-ի թիվ ՊՆ//5637-2021 գրությամբ ներկայացված փաստարկները՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն դեպքում նույնպես առկա չէ Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթների խախտում, քանի որ Ընթացակարգի Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 21-րդ և 22-րդ կետերով սահմանված պահանջներին, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով և «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 15.10.2021թ.-ին ներկայացված համանման բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջներն

հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 21-րդ և 22-րդ կետերով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/96 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 15.10.2021թ.-ին ներկայացված համանման բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**